



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

-- դեկտեմբերի 2017 թվականի №--Ա  
քաղ. Երևան

**«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
2014-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի նոյեմբերի 24-ի №2/9-089 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2014-2018 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №15Ա որոշման №6 հավելվածի 2.1 և 2.2 ենթակետերում «№1 գներատորի փոխարինում, գրգռման համակարգի արդիականացմամբ» և «№2 գներատորի փոխարինում, գրգռման համակարգի արդիականացմամբ» բառերը փոխարինել համապատասխանաբար «№1 գներատորի և գրգռման համակարգի արդիականացում» և «№2 գներատորի և գրգռման համակարգի արդիականացում» բառերով, իսկ «2 663,5» և «2 643,9» թվերը՝ «1 928,2» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**